

## ՍԵՐՔԵՅ ԳԱԼՍՏՅԱՆ

### ՄԱՅՐԱՍՈՒՏԻ ՎԵՐՋԻՆ ՇՈՂԵՐԻՑ ԱՌԱՋ

Արվեստանոցում ցրտել էր: Վաղուց էր լույսը մութի դեմ պայքարում, իսկ հեռվում՝ պատուհանից շատ հեռու, արդեն մարել էին մայրամուտի վերջին շողերը:

Բազմոցի վրա, ըստ Մաեստրոյի խստապահանջ ճաշակի, նախապես ստեղծված էր մի միջավայր, ուր և պառկել էր բնորդուհին: Նա խաղաղ էր, գրեթե անշարժ, քթի տակ քարացած մի անմեղ ժպիտ, և ասես ոչ լույսի ու մթի կռիվը, ոչ էլ ներխուժած պաղությունը զգալ չէին տալիս նրա մերկությունը:

Երկրորդ օրն էր, ուստի և երկրորդ ժամաչափը բնորդուհու համար: Մաեստրոն աշխատում էր դանդաղ, առանց ճիգերի, հայացքը սահեցնելով մերթ ձախ-աջ, մերթ վերից վար: Եվ հայացքը կանգ առավ... Նայում էր անթարթ, ակնապիշ: Ձննեց երկա՛ր և նկատեց, որ բնորդուհու զգլխիչ հոլանի կրծքից լույս է ճառագում, որը մինչ այդ չէր նկատել, և նա մրմնջաց. «Ծոցույդ լոյսն դուրս ծագէ, գէն ելնէ մեռէլն ի հողէն»:

– Մաեստրո՛, բա՞ն ասացիք... Աշխատեցե՛ք, ես չեմ մրսում:

Ասես շանթեցին: Ծանր և անհանգիստ մի շարժում արեց... Այդպես անսիրտ գողացան երազը... Ձեռքի վրձինները դրեց ներկապնակին, վեր կացավ, իսկ դա նշանակում էր ժամաչափի ավարտը: Մոտեցավ, կարմիր, կաշվե բազկաթռռից վերցրեց բնորդուհու շորերը: Մի պահ ցանկացավ մոտեցնել դեմքին, բայց վարանեց... Մոտեցավ ու խնամքով ծածկեց կնոջ մերկությունը՝ աչքը չկտրելով լուսապսակ կրծքից:

– Մաեստրո՛, նայեք ինձ այդպես և ես... չեմ մրսի...

Մաեստրոն շրջվեց, ձեռքը տարավ ժիլետի գրպանը, կանաչ թղթադրամ դրեց սեղանին և դուրս եկավ պատշգամբ: Այնտեղ՝ հեռվում, քաղաքի շենքերից ու կիսախավար բլուրներից այն կողմ, թափառահած ամպերից էլ այն կողմ, արևը հավաքել էր իր ներկապնակի բոլոր երանգները և անցնում էր մյուս կիսագունդը...

Հաջորդ օրը բնորդուհին եկավ ավելի վաղ, քան պայմանավորված էին: Օրը պայծառ էր, արևոտ: Շողերը պատուհանից թափանցել էին ներս, հաճելի ջերմություն էր: Նա դանդաղ հանվում էր, իսկ Մաեստրոն, որ մինչ այդ գիրք էր կարդում, էջանիշը դնելով՝ փակեց և գործի անցավ: Նախ փոքր ինչ կարգի բերեց բազմոցի միջավայրը, հետո խնդրեց բնորդուհուն տեղավորվել՝ օգնելով նրան ճշտորեն ընդունել պահանջվող դիրքը:

– Մաեստրո՛, կարելի՞ է նայել:

– Դեռ շուտ է, մի՛ շտապիր:

Մաեստրոն նստեց մոլբերտի առաջ: Երկար զննում էր՝ ասես ընտելանալու համար թե՛ բնորդուհուն, թե՛ կտավին: Հետո, վրձինները հավաքելով ձախ ձեռքում, սկսեց արագ-արագ քսել կտավի վերին ձախ մասը, հետո փոխեց վրձինը, և շարժումները գնալով թեթևացան, հետզհետե պայծառացավ Մաեստրոյի թավաստև մորուսապատ դեմքը, թավ հոնքերը իրենց տեղն ընկան, աչքերը լցվեցին ջերմությամբ, խաղաղվեց հայացքը: Նա նկարում էր ոգևորված:

Բնորդուհին նկատեց և հասկացավ, որ Մաեստրոն արդեն ինքն իրենից գոհ է, աշխատանքը ստացվում է... Ու սկսեց երևակայել...

Նախ ուրախ էր, հպարտ, որ ինքն իր մերկությանբ այդպիսի մի համբավավոր վարպետի վրձնի շնորհիվ դառնում է արվեստի գործ, դառնում գեղարվեստական արժեք: Պատկերացրեց, որ Մաեստրոյի հոբելյանական ցուցահանդեսին սրահի կենտրոնական մասում կախված է իր նկարը, և արվեստասեր հասարակությունը խմբվել է ահա մեծադիր այդ կտավի առաջ և քարացել է... Ու հանկարծ, ասես ինչ-որ բանից ահաբեկված, թռավ տեղից, անհանգիստ հայացքը հառած վարպետին.

– Մաեստրո՛, խնդրում եմ, դեմքս չաղավաղե՛ք, նկարեցեք ինձ և ոչ թե ինչ-որ վերացական մի դեմք:

Վարպետը ջղաձիգ շարժումով նստեց վրձինները: Ուզում էր հոխորտալ, բայց սաստեց ինքն իրեն, մի ներող ժպիտ հայտնվեց աչքերի մեջ... Ելավ տեղից, մոտեցավ նրան, որ օգնի նույն դիրքն ընդունել:

– Մաեստրո՛, գրկեցեք ինձ... Ես ձեզ եմ ուզում...

Վարպետը մթնեց, մի պահ շփոթվեց բնորդուհու խենեշ նայվածքից, գլուխը խոնարհեց, սակայն առանց հայացքը հեռացնելու հոլանի կրծքի շողշողացող ցոլացմունքից՝ ուղղեց մեջքը, կանգնեց ողջ հասակով: Բնորդուհին իր գեղահոն հնայքով, ինչպես ռոդենյան վսենաշուք մի անդրի, կանգնեց Մաեստրոյի առաջ՝ սիրահորդ ու ցանկամուլ սպասումսով:

Հեշտամուլ մի բույր, որ տարածվել էր նրանից, ալեկոծեց վարպետի հոգին... Ո՞վ կդիմանա ժպտաթոր կնոջ խելխուլ կախարդանքին. պրկվեցին նրա ջղերը, ու զսպելն էր անհնար... և աղոթքի պես մրմնջաց տառապյալ հոգին. «Ծոցույդ լոյսըն դուրս ծագե, գեմ ելնե մեռելն ի հողեն»: Եվ աջն իջավ կնոջ ուսին, առաքինի ու բարի, ասես հպումն էր նրա սրտի և ոչ թե բազկի, ու կինը հնազանդված գրավեց իր դիրքը:

– Բավ է խանգարես... Հարկ է, որ նախ ավարտեմ գործս...

Մայրամուտի վերջին շողերի մարելուն դեռ շատ կար, սակայն մոտ էր կտավի ավարտը, բայց ինչ-որ բան չէր ստացվում: Եվ վարպետը հասկացավ, որ իրեն

խանգարողը հենց արևի շողերի առատ հոսքն է դեպի ներս: Նախ փորձեց պատուհանը փակել ու քաշել վարագույրը: Ո՛չ, դա չգոհացրեց վարպետին, ու հասկացավ, որ պետք է սպասել մայրամուտի վերջին շողերին... Խորամանկ ժպիտն ընչանցքի տակ թաքցնելով՝ ելավ տեղից: Կարմիր, կաշեպատ բազկաթռռից վերցրեց կնոջ շորերը, այս անգամ աննկատ հպեց երեսին, հետո ծածկեց նրա մերկությունը:

– Մի պահ հազնվիր, իսկ ես սուրճ կպատրաստեմ:

Երբ արդեն ըմբռնվում էին սուրճի թարմազդու վայելումը, առանց աչքը կտրելու բնորդուհու կիսաբաց կրծքից, չգիտես՝ ինքն իրեն համոզելու, թե այլևայլ խոկումների մեջ՝ Մաեստրոն մրմնջաց.

– Հասկանու՞մ ես, պետք է սպասենք, թե չէ՝ չի ստացվի... Ես կկորցնեմ ոգևորությունս, իմ ոգեշնչման գլխավոր լույսը... իսկ սա պետք է լինի իմ լավագույն գործը:

Հասկացա՞վ բնորդուհին վարպետին, թե ոչ՝ դժվար է ասել: Նա անվերջ ժպտում էր, իսկ ժպտախինդ աչքերի մեջ խենեշ պահեր նշմարվեցին, և թալկտացող հոգին ըմբոստացավ: Գուցե վարպետի գրկում հայտնվելու մարմաջը, նրա բազուկների առնական հպումը զգալու տենչանքը տանջում էր նրան:

– Ես ձեզ կօգնեմ, – և շորը վրայից գցելով՝ տեղավորվեց իր դիրքում:

Արվեստանոցում լույսն ու մութը նորից մենամարտում էին, իսկ հեռու հեռվում՝ պատշգամբից այն կողմ, քաղաքի երկնաքերերից ու հեռավոր բլուրներից այն կողմ, արևը հավաքում էր իր փեշերը, սակայն դեռևս ձեռք չտալով իր ներկապնակին՝ խաղաղ հեռանում էր: Եվ ո՞վ հզորափայլ Տեր, երբ օրը սկսեց սահել, ու վրա հասավ ժամաժամբի պահը, ժայթքեց մի լույս՝ ծոցից ճառագած, ծոցից ելանած... Եվ այդ լույսը տիրել էր Մաեստրոյի ոգուն, ու նա աճապարում էր: Նա վրձնում էր մեկ նրբին, մեկ տենդագին, վրձնում էր աներևակայելի մի լույս... Իսկ ժանգառքը պատել էր արվեստանոցի պատերը: Ու մի ձայն պոկվեց վարպետի հոգուց. խուլ, գնալով զորացող մի ձայն տարածվեց, չտեղավորվելով սենյակում դուրս եկավ պատշգամբ, թևածեց թաղամասի տանիքներն ի վեր:

– Լու՛յսը, լու՛յսը, լույսն աստվածային... Ստա՛ց-վե՛ց... Օ՛, Տեր, ստացվե՛ց...

Ու նա չզգաց, թե այդ երբ բնորդուհին հայտնվեց կողքին՝ աչքերը հառած կտավին:

«Օնցույդ լույսըն դուրս ծագէ, գէմ ելնէ մեռելն ի հողէն»... Առավ բնորդուհուն իր ջլապինդ թևերին ու դուրս ելավ պատշգամբ՝ դեպի մայրամուտի վերջին շողերը:

Կարծես հրաժեշտ էին տալիս հեռացող արևին... Չետո թափ ընդհատ վերադարձավ, ուզում էր կնոջն իջեցնել բազմոցին, բայց ընկրկեց... շտապեց փայտե աստիճաններով ի վեր՝ երկրորդ հարկի իր ննջասենյակը, ուր նրանց սպասում էր փափուկ, հաճելի անկողինը...

Արթնացան, երբ արդեն կեսօր էր: Վաղ աշնան արևոտ օրերից մեկը:

– Ես հիմա, – ու Մաեստրոն սահեց ի ծոցեն, մի շապիկ գցեց վրան և իջավ աստիճաններով:

Բնորդուհին ընկողմանել էր մահճակալի մեջ ու տրվել անուրջներին, երբ թախկ-թախկ խուլ հնչեցին Մաեստրոյի ոտնաձայները:

Սուրճին սպասում էր, բայց հաղարջի լիկյորը հուզեց բնորդուհուն: Իսկ երբ բաժակները լցվեցին, նա, խորամանկ ժպտալով, մատը թաթախեց բաժակի մեջ, քսեց Մաեստրոյի շուրթերին, իսկ վերջինս, չկռահելով հետոն, իսկույն լիզեց շուրթերը: Բնորդուհին դժգոհության մի քաղցր ճիչ արձակեց ու կրկնեց նորից... կրկնեց երրորդ անգամ, ու երբ արդեն թաթախուն ժպտափայլ շուրթերը վառվում էին, նա ազահորեն հարձակվեց. երկար ու երկար վայելելով սիրակեզ համբույրի համը՝ խելաթափ արբենում էր...

Եվ երբ դուրս եկան անկողնուց, արևը կրկին հավաքել էր իր փեշերն ու անխռով անցնում էր մյուս կիսագունդ՝ հաջորդ հերթափոխին:

– Մայրամուտից մայրամուտ, – նկատեց բնորդուհին և դանդաղ հագնվեց:

Չրաժեշտից առաջ Մաեստրոն երկու կանաչ թղթադրամ դրեց սեղանին և դուրս եկավ պատշգամբ: Քիչ անց զգաց բնորդուհու ներկայությունն իր թիկունքում:

– Ես էլի կգամ, եթե խոստանաս, որ քո մայրամուտի վերջին բոլոր շողերն ինձ կնվիրաբերես:

Գնաց: Իսկ երբ լսեց հեռացող ոտնաձայները, շրջվեց. «Գլուխն ընդվիզ այնքա՛ն հպարտ կբռներ»... Սթափվեց: Փորձեց վազել նրա ետևից, գրկել, համբուրել, ետ բերել... ընկրկեց: Ա՛խ, իր այդ բնավորությունը՝ երբեմն չոր, երբեմն դաժան, երբեմն իրեն վնասավոր...

Չետո, երբ աչքն ընկավ սեղանին, նկատեց, որ թղթադրամները տեղում են: Գլուխն առավ ափերի մեջ և փլվեց կաշվե կարմիր բազկաթոռին.

– Իբլիսի որդի՛ իբլի՛ս, – անվանարկեց ինքն իրեն ու ծանր խոկումների մեջ ընկավ:

Իգաչարչար գիշերներ նա շատ էր ունեցել, բայց այդ մեկն ուրիշ էր: Ու թեև Մաեստրոն իր էությամբ իգապաշտ էր, բայց նման թովչուհի արարածին չէր կարող չառանձնացնել:

Թախծահուշ, թախծուկ օրեր էր ապրում Մաեստրոն: Պատեպատ էր զարկվում՝ անընդհատ հիշելով հեռացումի պահը. «Գլուխի ընդվիզ, այնքան հպար կբռներ»...

Նկարը մասնակցեց աշնանային ցուցահանդեսին: Մաեստրոն ներքուստ համոզված էր, որ բնորդուհուն այնտեղ հաստատ կտեսնի: Գրեթե բոլոր թերթերը տպագրեցին Մաեստրոյի նոր աշխատանքը, վարպետին հրավիրեցին հեռուստահաղորդման... Խեղճն էկրանից փնտրում էր իր բնորդուհու հայացքը...

Եվ աշունն անցավ, եկավ ձմեռը, և ձմեռն անցավ, ու եկավ գարունը, իսկ բնորդուհին չեկավ ու չեկավ:

«Ես էլի կգամ... Օ՛, դու թանձրալյարդ ժանտկեն, խեղեփ արարած... Միայն թե ձեռքս ընկնես հանկարծ»... Թուլացել էր Մաեստրոն սպասումից, թախկել էին ուժերը:

Մոտեցավ բաց պատուհանին, հենվեց պատուհանի գոգին և նայեց հեռուները. այդպես երբեմն փարատում էր ձանձրույթը: Հեռվում՝ ամռան տապի մեջ, երևում էր Արարատը: Իր հինգերորդ հարկից, որը փաստորեն համազոր էր տասը հարկանի շենքի բարձրությանը, չհաշված, որ արվեստանոցների շենքը կառուցված էր վերելքի բարձունքին, լեռը վերևից երևաց առավել վեհ ու տիրական, իսկ դիմացի փողոցը՝ իր շենքերով ու մանր-մունր կրպակներով, ասես ոտքի տակ էին, կարծես այդ ամենը տեսնում էր ուղղաթիռից:

Հայացքը կանգ առավ ավելի մոտ գտնվող շենքի տանիքին: Սպիտակ պուտերով գորշ կատուն «զբոսնում էր» տաք թիթեղների վրայով՝ անհոգ ու անտարբեր ամառային այդ շոգին... Բայց ո՛չ, նա մի սովորոտ տեղ գտավ և փռվեց՝ վայելելով սովերածածկ զովությունը: Մաեստրոն ձանձրույթը թոթափելու համար երբեմն զբաղվում էր տարօրինակ մի պոեզիա հորինելով, ինքը դրանք անվանում էր անտիպոեզիա: Եվ ահա հանպատրաստից բարձրաձայն արտասանեց մի նոր նմուշ.

Ոչ մուրճ ունեմ, ոչ էլ մեխ,

Կատուն թռավ ժեշտերին...

Հնչեց դռան զանգը.

«Նա է», – անցավ մտքով ու վազեց դեպի միջանցք:

Լուսապսակ դեմքը, ճերմակ մետաքսե շրջագգեստը լուսավորել էին միջանցքի խավարը:

– Օ՛, Տե՛ր իմ, հրա՛շքն իր ոտքով, – ու սահեց հայացքը դեպի կնոջ ձեռքերը, որոնք գեղեցկաշուք գրկել էին առավել լուսավոր բան... Եվ նա թափընդհատ խլեց այն կնոջ ձեռքից ու խենթացած վազեց դեպի սեղանը:

Դրել է սեղանին, հապճեպ քանդում է ծրարը, հետո բարուրը.

– Ահա՛... ահա՛ նա... նա՛, – մեկ ճչում է, մեկ բամբ թառանչներ է արծակում:

Կինը ժպտախիհնդ հայացքը հառել է նրան ու շշմջում է. «Իսկը կապելու գիժ... Չլինի թե խենթանա Մաեստրոս»...

Մինչ կարծակվեին կապանքները, մանուկը ժպտադեմ նայում էր նրան, իսկ երբ քանդվեց վերջինը, ասես դրան էր սպասում, ցայտեց տաք հեղուկը՝ շատրվանի նման: Մաեստրոն, առավել խենթացած, բարձրացնում է նրան, մոտեցնում դեմքին...

– Ահա՛, ահա՛ մանչուկս:

Տաք հեղուկը թրջում է նրա մորուսը, իսկ նա խելակորույս համբուրում է մանչուկի շիթարձակ «շատրվանը»: Հետո ձեռքերի վրա բարձրացրած վազում է պատշգամբ՝ ճոճելով ու գոռալով.

– Է՛-հե՛յ... նա եկա՛վ... Է՛-հե՛յ, մենք այստեղ ենք...

Թիկունքում զգաց կնոջ ներկայությունը, շրջվեց ու սոսկալի մի տագնապ ապրեց... Վազելով երեխային դրեց սեղանին, վերադարձավ ու... նրա հաղթ բազուկների վրա, ինչպես մի անդրի տապալվեց կնոջ թել-դերձան մարմինը:

Սիրտը տագնապեց, վարպետը չկորցրեց իրեն. քնքշորեն իջեցրեց բազմոցին, սկսեց փութաջան շփել նրա ձեռքերը և շշմջաց.

– Ուշքի եկ, հոգիս...

Կնոջ շուրթերին մի ժպիտ ծռվեց և ուժ հավաքելով՝ շշմջաց.

– Նա կարող էր ընկնել...

– Ինչպե՞ս թե ընկնել... Ստքովդ ավելի լավ բան չանցա՞վ...

– Դու քեզ կորցրել էիր, – նա չկարողացավ շարունակել, որովհետև Մաեստրոն արդեն փակել էր նրա շուրթերն իր ջերմ համբույրներով:

Երկուսն էլ կարոտել էին միմյանց, սակայն լսելով երեխայի թնկթնկոցը, Մաեստրոն թռավ նրա կողմը:

– Փաթաթիր, բեր այստեղ, կերակրելու ժամանակն է:

– Բայց նա ժպտում է... Ի՞նչ խորամանկն է, հա՛... Ուզում է միայն իրենով զբաղվենք, – հետո դարձավ կնոջը՝ շարունակելով փաթաթել երեխային: – Ինչու՞ անհայտացար, կարո՞ղ ես ասել...

– Ես հղիացա: Առաջին ամիսներն ուղղակի անտանելի էին, հետո էլ պետք է լինեի բժիշկների անմիջական հսկողության տակ...

– Ես քեզ ինչո՞վ կխանգարեի...

– Չէի ցանկանում հոգսերի մեջ քաշել քեզ... Ծնողներս ամեն ինչ հոգում էին:

– Ե՞րբ է ծնվել:

– Ուղիղ ինը ամիս ինը օր հետո:

Մաեստրոյի աչքերի մեջ ժպիտն ու միտքը իրար խառնվեցին.

– Ուրեմն նա այսօր քառասուն օրական է...

– Դու ոչ միայն լավ հիշողություն ունես, լավ էլ արագ հաշվում ես... Երեկ լրացավ և մենք այսօր եկանք քեզ մոտ: Ես նրան անվանակոչեցի Կարապետ: Գիտեմ, այդ անունը դու շատ ես սիրում...

– Խեքս մաղվում է... Դու որոշել ես ինձ խելքահա՞ն անել...

– Տուր մեր Կարապետին, իմ խելքամաղ Մաեստրո:

Մաեստրոն խաղում էր մանչուկի թաթիկների հետ և անհասկանալի բաներ մրմնջում: Հետո բարուրը տալով կնոջը ասաց.

– Առ իմածին որդուս:

– Ի՞նչ ասացիր, – չհասկանալով՝ զարմացած նայեց Մաեստրոյին:

– Ասում եմ, իմածին, այսինքն՝ ինձնից առաջացած որդուս...

Կինը քահ-քահ ծիծաղեց և կուրծքը դրեց երեխայի բերանը:

Մաեստրոն իրար անցավ. նա գտավ լուսանկարչական խցիկը, ամրացրեց եռոտանու վրա, դրեց իր ուզած կադրը, լիցքավորեց և շտապեց տեղավորվել կնոջ կողքին՝ համբուրելով նրա ճակատը. հենց այդ պահին էլ աշխատեց խցիկը հավերժացնելով բաղձալի այդ պահը: Մաեստրոն պատերից հավաքել էր բոլոր նկարները, տեղավորել էր դարակների վրա և ազատ, ընդարձակ պատին կախել էր միայն իր նոր մեծածավալ աշխատանքը: Նա այդ գործը (գաղտնիք է, բայց ասեմ՝ կյանքում առաջին անգամ օգտվեց լուսանկարից) անվանեց «Ընտանիք»: Եվ ամեն օր, երբ դուրս է գալիս ննջարանից՝ թողնելով այնտեղ կնոջն ու երեխային վաղորդյան անուշ մրափի մեջ, կանգնում էր աստիճանների վրա, երկար նայում էր նկարին և որպես աղոթք մրմնջում. «Փա՛ռք քեզ, Տե՛ր, որ ինձ տեց»՝ դարձրի՛ր այս ընտանիքին մայրամուտիս վերջին շողերից առաջ»: